


ԳԻՒՏԵՐՆ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ



ՈՐՔԱՆ նենգաւոր և մարդախորշ է այժմեան պատերազմը: Ան լրբօրէն՝ մաշափուռ նպատակներու կը ծառայեցնէ խաղաղասիրական, յառաջդիմական մարդկային մտքին ամէն զիւտերը: Ինչ դառն իրականութիւն. Գիտութիւնը Մահուան գերանդին կը սրէ, մարդկային էակներու լափիւզող հունձքեր անոր կը մատուցանէ: Տարբարանութիւնը հեղձուցիչ, թունաւորիչ կազեր կը պատրաստէ: Բնարանութիւնը միջոցներ ցոյց կու տայ՝ զանոնք ոռւմբերով, հրձիգութեամբ ուղղելու եղէկուան բարեկամներու բանակին վրայ. հոն խեղճ երիտասարդները, ընտանիքի հայրերն ապշահար, զգայազիրկ եղած՝ զընդակացիրներու (mitrailleuse) կապարներուն, երկաթներուն կարկուտին տակ՝ գետին կը թաւալին: Ուղղելի օդապարիկներ, ամենչի օդանաւեր, երազաթօղչ սաւառնակներ՝ երկինքը պղծել, երկրիս քանդել կ'աշխատին. ահա՛ անոնք կը տեղան հրձիգ ոռւմբեր, քանդիչ զունտեր, սպաննիչ նետեր, մահացու գնդակներ՝ անփնաս բնակչութեանց, անմիջ դպրոցական մանկտեաց խումբերուն վրայ. հարիւրաւորներ, հազարաւորներ կը թաւալին, կը զալարին՝ մահը գրկած: Իսկ այն տասնեակ մղոններ, քսանեակ հազարամեղրներով հեռու թաքստոցներու մէջէն՝ քաղաքներու, գիւղերու, մահարձաններու վրայ ուղղուած սաղայէլեան հրամօթներու բերնէն ժայթքած ուրանօթները, որքան աղիտաբեր քանդուածներ, որքան անմեղունակ անձերու կեանքի թելերը կը խորտակեն, կոտորակեն, աւերածնոր կը սփռեն ամէն կողմ: Իսկ այդ ովկիանոսի խորքերէն վեր սուրացող նենգօտ ընդժողեանիւրը, ակնթարթի

մը մէջ ինչ կեանքեր, ինչ գանձեր, ինչ հարստութիւններ տարտարոսի անդունդները կ'իջնցնեն: Անոնք ալէժուփ քաղաքներ ձևացնող ամենչի շրջաններու անփնաս ճամբորդները՝ ծովամոյն կ'ըն-




Հեծիկաշարժ - զնդակացիրը կ'արշաւէ:

կըղմեն, ճամբորդներ որոնցմէ շատերը Նոր աշխարհէն դէպ ի հին, դէպ ի իրենց սիրելիներ վերադարձող բանուորներ ըլլալով, մինչ իրենց քրտինքով վաստկած դրամներու նպաստով, ժպտու և հանգիստ պիտի պարգեւէին կարօտալի ընտանեաց, դառն սուգի և անմխիթար տառապանքի կը մատնեն յուսախար սիրելիները:

Անխիղճ ջաղաքակրթութեան այս աստիճանն վայրագ մարդասպանութեան փոխարկուիլը՝ զարհուրանք և սարսուռ կ'ազդէ մտածող ուղեղներու: Տեսէ՛ք ինչպիսի՛ ճարտարութեամբ՝ նոյն իսկ զրօսանքը (sport) մահուան միջնորդ դարձուցած են՝ հնարիչ մտքեր: Երէկուան հեծելաշարժները (motocyclette) որոնք վաճառիկ յարարութեանց կամ օրինաւոր զրօսանքի ուժգնութեան էին և զգլխիչ երազութեամբ կը սուրային ճամբաներու մէջ, ստէպ սիրական ընտանիքի անդամները գեղեցիկ սայլակներու մէջ բազմեցուցած ըարշտանելով ղէպի զրօսավայրեր, այժմ այդպիսի սայլակներուն փոխանակուած են գնդակացիներ տեղափոխող փոքր կառքեր: Մաքսիմի հնարած վերջին կատարելագործեալ երազահարուածեան հրազէնը՝ աւազաթիչ հեծելաշարժի կից սայլակին մէջ գետնի վրայ, պատրաստ կը սպասէ հետախօսի կամ սաւառնակի մը նշաններու: Հասկա՛հարկ հեծելաշարժի ղեկավարը կը հասկնայ երթալի՛ք վայրը, իսկոյն կը սուրայ, կը դիմէ ղէպի հարկուաւոր հազարամեղ հեռու ցոյց տրուած դիրքը: Մեքենան կը կենայ, զընդակացի սայլակն կ'անջատուի: հեծելաշարժը կը վերադառնայ պահակավայրը, մինչ զօրականն ակնթարթի մը մէջ կը լարէ, կ'ուղղէ, նուաճ են՝ առերևոյթ մարդասիրութեան յողողող սկզբունքները:

Որքան հեգնական է անգութ ջաղաքակրթութիւնը. որքան սնանկութեան մատ-



Դ. ԳՐԱՅԻՆ ԺԱՅՐՈՒՄԻ ՎԵՐԱՊԵՐՈՒՄԻ ՄԱՍԻՆ ԵՐԱՅԻՆ ԵՐԱՅԻՆ ԵՐԱՅԻՆ

նուաճ են՝ առերևոյթ մարդասիրութեան յողողող սկզբունքները: